

ՀՈՒՅՄ

Մշակութային և հասարակական ամսագիր

لويس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446

**Ինչո՞ւ են լռում թե՛ Երեւանը և թե՛
Սփյուռքը Հայաստանի 1988 թվականի
երկրաշարժի մասին, ինչու էլ
հանգանակություն չեն անում, միթե
վերացե՞լ են բոլոր ավերակները, միթե
բոլոր աղետյալների մարդավայել տուն
ու հանգրվան են տվե՞լ.
Չէ՞ որ ինչքան կարողացան երկուստեք
յուրացրին օժանդակությունները**



Այս համարում

Հայերեն բաժին


- 1- Իրանահայ Համայնք.....1
- 2- Երևանի Իշխանապետություն.....4
- 3- Արևմտյան Հայաստան.....8
- 4- Միջազգային.....12
- 5- Հասարակական.....13
- 6- Մշակույթ.....15
- 7- Խոհեր.....18
- 8- Գծանկարչություն.....18
- 9- Հայերեն-սլոբակերեն առումանի.....18

Պարսկերեն բաժին

- 1- Լուրեր.....1-2



Շապիկի առաջին էջում՝ 1988 թ. դեկտ. 7-ի երկրաշարժ
Վերջին էջում՝ Լոր Գիրք



Համար 174, դեկտեմբեր 2012 թ.
No. 174, December 2012
ماهنامه لویس - شماره ۱۷۴ دی ماه ۱۳۹۱

ԼՈՒՅՍ

Մշակութային եւ հասարակական ամսագիր

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com
Ինտերնետային հասցեն www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Ed. Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Թերթի Գինը՝ Հատակահար - 5000 ռիալ
Բաժանորդագրություն՝

Իրան՝ մեկ տարի՝ 60,000 ռիալ

Արտասահման՝ մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են
չհամընկնել խմբագրության տեսակետներին:
Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին
պարտադիր է:

Երկրաշարժից 24 տարի անց աղետի գոտին

դեռ ամբողջությամբ չի վերականգնվել

Անթրեանուրյան հիմնադրամը լուծելու կոչ՝ իրանուրյաններին
«Քաղաք մերն է» Խաղաղության համաձեռնության կոչը՝ ազդված
Հայաստանի իրանուրյաններին

Կրթյալ 1988 թվի Սեպտեմբերի երկրաշարժի 24-րդ տարեկիցը:
«Քաղաք մերն է» Խաղաղության համաձեռնությունը արձանագրում է, որ չնայած անցած տարիներին աղետի գոտում իրականացված բնակարանափոխարկումը, երկրաշարժից 24 տարի անց աղետի գոտին դեռ ամբողջությամբ չի վերականգնվել. միայն Ֆյունիխում երկրաշարժից անթրեան է և անտիկերում է աղքատ ավելի քան 2.700 ընտանիք (տեղում և կիսով անթրեան ընտանիքներ, բնակարաններ կորցրած և չնափառված, սեփական տներ կորցրած ընտանիքներ), իսկ այլ անթրեան ընտանիքների թիվը 1.600-ից ավելի է (ներգազայուներ, սոցիալական պատճառներով բնակարանները օտարում և անտիկերում կացարան գտած ընտանիքներ և այլն): Փորձագիտությունը, ազատությունը Ֆյունիխում և Շիրակի մարզում կործանարար չափեր ունեն, պատճառական տվյալներով, ազատ է համարվում գյուղացիների 47 առկայը:

Այս ուղերձով գիտնում ենք Հայաստանի Ազգային Ժողովին, նախագահին և կառավարությանը, կաշկեով.

1. Ուժը կորցրած համարել 22 կառավարության 1988 թվականի համար 432 որոշումը: Երկրաշարժից անթրեան դարձած, կեսազայուս տեղում և կիսով քան ընտանիքների այն մասերին, որոնք մնացել են ապրելու անտիկերում, նախաչել որդես պետության կողմից փոխառուցման կերպի անթրեաններ, առաջիկա 2 տարում այս խնդիրն ապահովել բնակարաններով՝ ըստ ընտանիքի անդամների փաստացի թվի:

2. 1988 թվի երկրաշարժից փաստացի անթրեան դարձած, բայց չնափառված ընտանիքներին և սեփական տներ կորցրած ու չնափառված ընտանիքներին կառավարության առաջ կազմավելու և բնակարաններով փոխառուցվելու՝ ըստ ընտանիքի անդամների փաստացի թվի:

3. Անթրեանուրյան պայմաններում աղքատ գյուղ ընտանիքներին կառույց կարգավիճակ շնորհել և առաջիկա 3 տարում ապահովել պետական կամ համայնքային սեփականության կառուցողական սոցիալական բնակարաններով կամ դրանց կազմադրված կացարաններով, որոնք կրան անժամկետ և առանց փորձովնարի բնակվելու իրավունք կառուցման, վնասելով միայն կառուցող ծախսերի կամար:

4. Վերը թերթում լուծումներից բացի, կիրառել այլընտրանային լուծումներ, ինչպես օրինակ՝ ցանկության ունեցող անթրեաններին ընձեռել արտադրություններ (տեղական փորձեր, էժան շինարար, աշխատանքի վնաս կամ որդես աշխատում ներգրավում սեփական տան կառուցման աշխատանքներում) անտիկերից ազատվելու և իրենց կամար սեփական տներ կամ կացարաններ կառուցելու կամար:

Մեր պարտն է կիսեցնել և զգուցանել, որ այս մասին կառարակական զործիչներն անազանել են տարիներ շարունակ, սակայն ինչիցը լուծելու իրանուրյանների փորձերը եղել են կառավարման, իսկ ինչիցը մնացել է և զարգացել: Այժմ էլ, անթրեանուրյան այս ինչիցը շատափայր չկարգավերելու կամ դանգաղ կարգավերելու դեպքում, եզնամանք իտրանուրյան՝ անթրեան ընտանիքների թիվը շարունակարար մեծանալու է, անկելու է արտագաղթը, սոցիալական եզնամանք ու սեփական օտարումը դանուր ևն անհարաբարելի:

Իսկ ի՞նչ կազմ Սիլյուսթի մի քանի միլիոն դարտի օգնությունները կայրենակից սպեսայաներին:

Իրանահայ Համայնք

Կայացան Թեհրանի հայոց թեմի 15-րդ Պատգամաւորական ժողովի ընտրութիւնները

Շաբաթ, 17 Նոյեմբեր 2012



Նոյեմբերի 16-ին, կայացան Թեհրանի հայոց թեմի 15-րդ Պատգամաւորական ժողովի ընտրութիւնները: Թեհրանից բացի ընտրութիւններ անցկացւեցին նաեւ Թեհրանի հայոց թեմի յարակից քաղաքներում՝ Արաքում, Ղազվինում, Սարիում, Ռաշտում:

Թեհրանի ընտրատեղամասերն էին՝

1. Ս. Աստուածածին եկեղեցի
2. Կենտրոն՝ Ս. Սարգիս եկեղեցի, «Արաքս» եւ «Ռոստոմ» դպրոցներ, «Արամ» սրահ եւ Ս. Մինաս եկեղեցի
3. Զէյթունում՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, «Մարիամեան» եւ «Արարատ» դպրոցներ
4. Մասունում՝ Ս. Թարգմանչաց եկեղեցի, «Յ. Թովմասեան» եւ «Թունեան» դպրոցներ
5. Մարդարապատ՝ Ս. Վարդանանց եկեղեցի: Նախնական տւեալների համաձայն՝ ընտրութիւններին մասնակցել են 5765 հոգի:

Ըստ նախնական տւեալների ընտրել են.

Կենտրոնում

1. Վարդան Վարդանեան՝ 1079 ձայն
2. Գեորգ Վարդան՝ 1076 ձայն
3. Ժանետ Թումեանց՝ 654 ձայն
4. Վարուժան Բաբումի՝ 628 ձայն
5. Նորայր Արամեան՝ 624 ձայն
6. Յարութիւն Եղնազար՝ 612 ձայն
7. Սեդրակ Գոջամանեան՝ 601 ձայն
8. Արբի Սարգսեան՝ 597 ձայն
9. Ալֆրեդ Դաւուդի՝ 579 ձայն
10. Հանրի Զուակիմ՝ 574 ձայն
11. Լիլիա Նորաեան՝ 568 ձայն
12. Յակոբ Յակոբեան՝ 563 ձայն
13. Ռազմիկ Խոտարախչեան՝ 531 ձայն

Զէյթուն քաղաքամասում

1. Էլիպս Մասեհեան՝ 1013 ձայն
2. Ալբերտ Քոչարեան՝ 997 ձայն

3. Սիլւա Աւասափեան՝ 994 ձայն
4. Աշոտ Սինանի՝ 951 ձայն
5. Շաքէ Աւետեան՝ 941 ձայն
6. Վահէ Խաչատրեան՝ 920 ձայն
7. Վալոդ Հախինեան՝ 918 ձայն
8. Հենրիկ Կարապետեան՝ 892 ձայն
9. Արա Շահվերդեան՝ 834 ձայն

Մասուն քաղաքամասում

1. Արմէն Հայրապետեան՝ 1138 ձայն
2. Հրաչ Իսախանեան՝ 964 ձայն
3. Ժողէֆ Մեհրաբեան՝ 953 ձայն
4. Վահէ Բաբայեան՝ 920 ձայն
5. Վահիկ Ռաթնուեան՝ 918 ձայն
6. Խաչիկ Քեշիշ՝ 892 ձայն
7. Ալվարդ Այդինեան՝ 878 ձայն
8. Ռուբինա Մարկոսեան՝ 850 ձայն
9. Հրաչ Մարկոսեան՝ 814 ձայն
10. Գուրգէն Քեշիշ-Յարութիւնեան՝ 775 ձայն
11. Արին Միրզայեան՝ 766 ձայն
12. Էդիկ Մեհրաբի՝ 762 ձայն
13. Հենրիկ Աղաջանի՝ 759 ձայն

Ս. Աստուածածին եկեղեցու ընտրատարածք

1. Սեդա Թարվերդեան՝ 127 ձայն
2. Կարինէ Բալըքչեան՝ 121 ձայն
3. Մարինա Թումանեան՝ 120 ձայն

Ս. Վարդանանց եկեղեցու ընտրատարածք

1. Ժոռէս Գրիգորեան՝ 139 ձայն
2. Էդուարդ Աբրահամեան՝ 137 ձայն
3. Գուրգէն Քարամեան՝ 132 ձայն

Յարակից քաղաքների մասնակցութեան պատկեր

- Արաք՝ մասնակցել են 77 հոգի, ընտրել է Արման Մեջլումեանը՝ 48 ձայն
- Սարի՝ մասնակցել են 58 հոգի, ընտրել է Ալբերտ Մանասեանցը՝ 58 ձայն
- Ռաշտ՝ մասնակցել են 28 հոգի եւ Ղազվին՝ մասնակցել են 21 հոգի, ընտրել է Ժակլին Ղահրամանեանցը՝ 49 ձայն
- Գորգան՝ մասնակցել են 64 հոգի, ընտրել է Մառա Մալխասեանցը
- Անզալի՝ մասնակցել են 26 հոգի, ընտրել է Կարէն Տեր-Յովսէփեանը՝ 23 ձայն

Աւարտեցին Մուծումբարի Ս. Հոփսիմէ եկեղեցու վերանորոգութեան աշխատանքները

08/11/2012 20:05:00 Թարիզ, Ազգային Առաջնորդարան

Ատրպատականի Հայոց Թեմի տարածքում գտնուող եկեղեցիների ու ազգապատկան կալածների իրավիճակով մտկից հետաքրքրւելու նպատակով, Հինգշաբթի 8 Նոյեմբեր 2012-ի առաւօտուն, Թեմակալ Առաջնորդ Գերպ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Չիֆթճեանը մեկնեց Մուծումբար գիւղը, Թարիզից 47 քիլոմէթր Հիւսիս-Արեւմուտք, հետեւելու համար նախապէս հայաբնակ

գիւղի Ս. Հռիփսիմէ պատմական եկեղեցու վերանորոգութեան աշխատանքներին:



Յայտնենք, որ եկեղեցին վնասներ էր կրել հիւսիսային Իրանում 11 Օգոստոս 2012-ին տեղի ունեցած երկրաշարժի հետեանքով: Երկրի հնապահականման հիմնարկի կողմից կատարող շինարարական աշխատանքներին հետեւելով, Թեմակալ Առաջնորդը իր գոհունակութիւնը յայտնեց հարազատ վերանորոգութեան համար, համաձայն հայ եկեղեցու ճարտարապետական ոճին ու Դ. դարի հայկական եկեղեցիների ոճով կառուցած այս եկեղեցու անհնարական չափերին: Առանց զանգակատան այս ամրաշէն եկեղեցու պատերի տակ, հիմքից մի քիչ բարձր գտնուող քանդակային անընթեռնելի գրութիւնները ցոյց են տալիս, թէ ներկայ շէնքը վերանորոգւած եկեղեցի է, եւ թէ նախապէս տեղում եղել է մի անելի հին եկեղեցի: Սոյն վերանորոգութեան թւականն է հաւանաբար հայկական ՌՃԽ №1691Թ թիւը, արեւմտեան արտաքին պատի մէջ զետեղւած մարմարի վրայ արձանագրւած:

«Մուծ» եւ «ամբար» բառերից կազմւած այս անունը տրւել է գիւղին, հաւանաբար միշտ մշուշապատ լինելու պատճառաւ: Նա միակն է եղել շրջակայ հինաւուրց հայկական գիւղերից, որը մինչեւ 20-րդ դարի սկիզբը, մինչեւ 1946 թիւ, հայաբնակ է եղել, երբ դժբախտաբար դատարկւել է ներգաղթի հետեանքով: Իր փառքի օրերին, 1870-ական թւերին, ունեցել է 300 տուն հայ բնակչութիւն, Մելիքների գոյգ ընտանիքներով՝ Մելիք Մնացականենք, եւ Մելիք Անդրեասենք:

Թաւրիզից Մուծումբար ճամբի վրայ նախկինում եղել է Մինաւար ՔՄենաւորձ գիւղը, իսկ Աղդաշ լեռան լանջերին Իլարի ՔԻ Լերինքձ գիւղը: Սրանից անելի վերեւ Արգիւսասարը ՔԱրծիւսասարձ, որտեղ գոյութիւն ունեն հին եկեղեցու անբակներ, որը ամէն Համբարձման տօնին ուխտատեղի էր Մուծումբարցի եւ շրջակայ գիւղերում բնակող հայութեան համար: Յիշարժան են նաեւ Ալշաղմուլքը ՔԱղջամուղջձ, եւ Մուծումբարի շուրջը գտնուող միւս տասը գիւղերը, որոնք վերջնականապէս հայաթափւեցին 1900-1905 թւերին:

Մուծումբար գիւղի բլրան գագաթին երեւում են «Ս. Աներեւոյթ» ժողովրդական կոչումով «Նորովարդ» կամ «Նորոտ» մատուռի անբակները, որտեղ ըստ անանդութեան երկնային լոյս է երեւացել եւ անհետացել, դրա համար Մուծումբարցիք կառուցել են այդ ուխտատեղին, գիւղի հանգստարանի շարունակութեան վրայ:

Մուծումբարը դարերի ընթացքում տարբեր ցեղերի կողմից անբի ու թալանի է ենթարկւել: Իսկ 20-րդ դարի սկիզբից, թուրք-պարսկական պատերազմի եւ Հայ Ազատագրական Պայքարի շրջագծում, Մուծումբարը դարձեալ յայտնի է դարձել, եւ իրաւամբ կոչւել «Փոքրիկ Զէյթուն» կամ «Արծեւոյն»: Յատկապէս 28 Հոկտեմբեր 1908-ին, հերոսական մարտեր են մղւել այս գիւղում, ընդամենը 20 ֆեղայիներով ՔՀրաչի տասնեակըձ, որոնք դիմադրել են Սամի եւ Բոյուզ խաներին, ստոյգ կոտորածից փրկելով Ս. Հռիփսիմէ ամրակուռ եկեղեցում ապաստանած գիւղի ողջ ժողովրդին: Այդ կուռ գոհում են Արտեմը ՔՌազմիկձ եւ Նիկոլը ՔԳանձակեցիձ, մինչեւ որ Թաւրիզից օգնութիւն է հասնում ֆեղայական նոր խմբերով: Եկեղեցում ապաստանած ժողովրդի մէջ այդ օր ծնում են երկու մանչ երեխաներ, եւ ծնողները դրանք անւանում են այդ օր գոհւած երկու ֆեղայիների՝ Արտեմի եւ Նիկոլի անուններով...: Իսկ սպաննած երկու հայդուկների դիակները բերում եւ թաղում են Թաւրիզի Լիլաւա թաղամասի Ս. Մարգիս եկեղեցու շրջափակում, որտեղ ցայսօր հանգչում են, բարեպաշտ ժողովրդի երկիւղալից հայեացքի ներքոյ:

Հայաստանի Խորհրդայնացումից յետոյ, 1921թւին, Մուծումբարը կարեւոր դեր է խաղացել հայ քաղաքական տարագրութեան համար, Կարմիր Բռնատիրութեան ճիրաններից ճողոպրած հայ ընտրանին Իրանի հողի վրայ խնամելով, նախքան նրանց Թաւրիզ հասնելը:

Պատմական անցեալով հարուստ, Ազատագրական Պայքարի այս օրրանում հայկական հետքերի ուսումնասիրութիւնը կատարելով, Թեմակալ Առաջնորդը նաեւ այցելեց գիւղի հարիւրաւոր տապանաքարերով խճանկարւած հանգստարանը, աղօթք մրմնջալով նախկին հայահոծ գիւղի փառաւոր անցեալի լուռ վկաների հոգւոց:

Ս. Անդրեւորդու մենաստանի «Հովի մատուռ»ում Ս. Պատարագ մատուցեց

01/11/2012 18:20:00Թաւրիզ, Ազգային Առաջնորդարան

Առօրեայ դրութեամբ Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայ կամ Մաղարդավանք այցելող բազմահարիւր օտարագգի զբօսաշրջիկների հետաքրքիր հայեացքի դիմաց բացուող առաջին հայկական հին կառոյցը, Արագի ափին գտնուող Ս. Անդրեւորդու Մենաստանի գողտրիկ «Հովի մատուռ»ն է, 13-րդ դարից մնացած:



միութեան կից «Արմենուհի» միութեան, Թ. Հ. Թ. Կարիքաւորներին օժանդակող մարմնի ու Աշխարհատեսների հայկական կենտրոնի կենտրոնատեղիները:

Հինգշաբթի 1 Նոյեմբեր 2012-ի առաւօտուն, Ատրպատականի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերայ. Ս. Գրիգոր Օ. Վրդ. Չիֆթճեանը, ընկերակցութեամբ մի խումբ ուխտաւորների մեկնեց Ջուլֆա, եւ ժամը 11-ին Ս. Պատարագ մատուցեց «Հովի մատուռ»ում:

Իր խօսած քարոզի ընթացքում, Հայր Սուրբը անդրադարձաւ Ս. Անդրեոսի մենաատանի շրջապատում մինչեւ 19-րդ դար գոյութիւն ունեցող Վարջամար հայկական գիւղի պատմութեանը, որի մասին յիշատակութիւն է թողել ֆրանսիացի ճանապարհորդ Սեն Մարթենը: Թեմակալ Առաջնորդը նաեւ խօսեց այն մասին, թէ 1988 թ-ի պեղումների ժամանակ են յայտնաբերել մատուռի կողքին գտնուող մի քանի սենեակներից բաղկացած համալիրի յատակագծի քարերը:

Այս մատուռը, ճիշդ հանդիպակաց կողմում լինելով Հին Ջուղայի եռաբլրեան հանգստարանին, 2005 թ-ի Դեկտեմբերի 10-ին լուռ վկան հանդիսացաւ հայկական մշակութային եղեռնի շարունակմանը, երբ գետի միւս ափում գտնուող հարիւրաւոր գեղաքանդակ հանգիստի խաչքարերը մեր անբախտ պապերի, բարբարոսաբար ջարդուելով յանձնեցին մայր Արաքսի լայնանիստ ափունքին, խեղդուելով դրա կոհակների տակ:

Հազիւ մի բուռ հաւատացեալներ ներառող մատուռի ներսում հոգեպարար սրբազան արարողութեամբ հոգեպէս զօրացած, իւրաքանչիւր մասնակից վերադարձաւ իր տունը, հայ եկեղեցու մելանոյշ շարականների եղանակները միացրած Արազի ջրերի բարձրագոյ շրջապատները:

Սասուն քաղաքամասի մշակութային համալիրի բացումը

Հինգշաբթի, հոկտ. 4-ի երեկոյեան Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Ս. Սեպուհ արք. Մարգսեանի ձեռամբ կատարեց Թեհրանի Սասուն քաղաքամասի «Նայիրի» տղայոց տարրական դպրոցին կից գտնուող մշակութային համալիրի բացումը, որը կեանքի է կոչել Թեհրանի հայոց Թեմական խորհրդի նախաձեռնութեամբ եւ իր մէջ ներառում է Ազգային գրադարանը եւ «Հայ կին»



Սրբազան Հայրը ժպտաւէնի հատումով համալիրի բացումը կատարելուց յետոյ՝ օրինեց մատուցած աղուհացը, ապա Ս. Մակար վրդ. Աշգարեանի, Թ. Հ. Թ. Պատգամաւորական ժողովի, Թեմական խորհրդի, ազգային մարմինների, միութիւնների ու «Ալիք» օրաթերթի ներկայացուցիչների եւ ներկայ հասարակութեան ընկերակցութեամբ մուտք գործելով համալիր դիտարկեց դրա տարբեր բաժինները՝ սկսելով տարբեր լեզուներով մեծ թուով գրքեր պարունակող գրադարանից, որի կառավարման պատասխանատւութիւնն ստանձնել է Մայրենի Յովասափեանը:

Այնուհետեւ համալիրի շրջափակում Տէրունական աղօթքով սկիզբ առաւ նախատեսւած միջոցառումը, որը նւիրած էր Հայ գրքի տարւան:

Ծրագրի հաղորդավար Նայիրի Շիրանեանի միջոցով ընթերցւած բացման խօսքում իմիջիայլոց կարեւորել էր հայոց լեզւի, գրականութեան ու մշակոյթի դերը՝ որպէս հազարամեակների ընթացքում հայ ժողովրդի գոյատեւումը երաշխաւորող ազդակներից մէկը, նաեւ արժեւորել էին այն անհատների ու մարմինների ազգօգուտ ծառայութիւնները, որոնք արդարացնելով իրենց կոչումը՝ ապահովել են հայ ժողովրդի ու նրա հոգե-մտաւոր արժէքների յարատեւումը:

Թեհրանի հայոց Թեմական խորհրդի խօսքն ընթերցեց խորհրդի անդամ Ռուբէն Շահվերդեանը, որում նշւած էր, որ վերջին 20 տարիների ընթացքում սա երկրորդ մշակութային համալիրն է, որ առաջանում է Թեմական խորհուրդների ջանքերով՝ հայրենակիցներին ծառայելու նպատակով յոյս յայտնելով, որ նորահիմն համալիրը Ս. Թարգմանչաց եկեղեցու եւ «Նայիրի» դպրոցի հարեւանութեամբ նպաստի քաղաքամասի բնակչութեան մշակութային կեանքի բարգաւաճմանը:

Ծրագիրն ընդգրկում էր նաեւ գեղարուեստական բաժին, որի ընթացքում ասմունքով ելոյթ ունեցան՝ Մինէ Միրզախանեանը (Եղիշէ Զարեանցի «Գովք Հայաստանի»)

եւ Նագելի Ռաթնուեանը (Ամալիա Գաբրիէլեանի «Փրկագին»-ը), «Հայոց տառեր» մեներգի կատարմամբ հանդէս եկաւ Գարինէ Մուրադեանը:

Վերջում Սրբազան Հայրը հրաւիրեց՝ արտայայտուելու:

Նա շնորհատրեւով այս մշակութային կենտրոնի բացումը՝ իր ուրախութիւնը յայտնեց, որ աշխարհում տիրող համաշխարհայնացման արշաւի, ընթերցանութեան պակասի եւ հոգե-մտաւոր արժէքների նկատմամբ անտարբերութեան պայմաններում ազգային իշխանութեան ջանքերով գրադարան բացւելով՝ դարերի ընթացքում մեր նախնիների մշակութասիրութեան շնորհիւ պահպանւած մեր ինքնութիւնը ներկայացնող հայ գիրքը հրամցում է հասարակութեանը՝ դա համարելով սխրագործութեան համագոր մի քայլ:

Սրբազան Հայրն ի մասնաւորի քաղաքաւասի բնակչութեանը յորդորեց լաւագոյնս օգուել ընձեռած առիթից:

Միջոցառումն աւարտեց ընդունելութեամբ:

Երեւանի իշխանապետութիւն

168 ժամ». Ազգային ժողովը միլիոնատերերի ակումբ է



ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների լրացրած հայտարարագրերի համաձայն, այս տարվա մարտի 3-ի դրությամբ (խորհրդարանական ընտրությունների նախաշեմին) նրանց բոլորի դրամական միջոցները միասին վերցրած կազմել են 15.2 միլիարդ դրամ, 70 միլիոն դոլար եւ 23.7 միլիոն եվրո: Դոլարային արտահայտությամբ՝ ավելի քան 138 միլիոն դոլար: Այդ մասին գրում է «168 ժամ»-ը:

«Այսինքն՝ յուրաքանչյուր պատգամավորի միջին կարողությունը 1 միլիոն դոլարից քիչ ավելի է: Սա, իհարկէ, ծիծաղելի թիվ է, քանի որ պատգամավորների մի մասի իրական կարողությունից մի քանի տասնյակ,

եթէ ոչ՝ հարյուր անգամ փոքր թիվ է: Այդ մասին է վկայում թեկուզ այն հանգամանքը, որ իշխող կուսակցության 12 պատգամավոր ընդհանրապէս դրամական միջոցներ չի հայտարարագրել (օրինակ, Գարեն Ավագյանը, Ռազմիկ Զոհրաբյանը, Խոսրով Հարությունյանը, Շուշան Պետրոսյանը, Առաքել Մովսիսյանը եւ այլք): Ոմանք էլ, պարզվում է, նախորդ մեկ տարում ապրել են միայն պատգամավորական աշխատավարձով, սակայն վարում են «Պորշ Կայեն», «Համմեր» կամ նվազագույնը՝ Գ դասի Մերսեդես:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ Հայաստանի Ազգային ժողովն, օրենսդիր մարմին լինելուց բացի կամ դրանից առաջ, միլիոնատերերի ակումբ է, որն, օրինակ, այս տարի կողմ քվեարկեց նվազագույն աշխատավարձը ամբողջ 2500 դրամով ավելացնելու նախագծին», - գրում է «168 ժամը»:

«Առավոտ». Իսկ ի՞նչ է պատահել,

Օսկանյանն ընդամենը միացել է

անձեռնմխելիություն չունեցող երեւ միլիոն

բաղաբացիներին



«Իսկ ի՞նչ է պատահել, ընդամենը Վարդան Օսկանյանը միացել է այն երեք միլիոն ՀՀ քաղաքացիներին, որոնք անձեռնմխելիություն չունեն, օրինակ՝ հավասարվել է ինձ: Եթէ ես ցանկացած պահի շարքային ոստիկանի քմահաճույքով կարող եմ կալանավորվել, Օսկանյանը հավասարվել է ինձ: Իսկ այն խոսքերը, թէ՛ «տասը տարվա նախարար» եւ այլն... Հիշեցնեմ, որ օրենքի առաջ բոլորը հավասար են: Բաֆֆի Հովհաննիսյանն էլ ԱԳ նախարար էր, սակայն տարիներ շարունակ չէին տալիս ՀՀ քաղաքացիություն: Նույն կերպ, երբ Օսկանյանի կառավարությունը հետապնդում էր Արզումանյանին, նա էլ էր նախարար», - երեկ այսպէս արձագանքեց Պարույր Հայրիկյանը՝ ի պատասխան լրագրողների հարցի, թէ ինչպէս է վերաբերվում Օսկանյանին անձեռնմխելիությունից զրկելուն», - գրում է «Առավոտը»:

Ինչու ցնցվեց Հայաստանի իշխող համակարգը

«Լրագիր» 14-11-2012. 15/11/2012



Share on: [f Facebook](#) [del.icio.us](#) [Diigo](#) [StumbleUpon](#) [Twitter](#)

Հայաստանում նախագահի ընտրության ընդառաջ թափ է առնում խորհրդարանական կառավարման մոդելի քննարկումը: Ընդհանուր առմամբ, որպես խորհրդարանական կառավարման մոդելի անցման անհրաժեշտություն, գլխավոր փաստարկ է բերվում հակակշիռների մեխանիզմի անհրաժեշտությունը:

Բայց, այստեղ ըստ երեւոյթին կա տեսական խաբկանք, որը հակադրության մեջ է գործնական իրողությունների հետ: Չի բացառվում նաև, որ իրականում ոչ թե խաբկանք է, այլ պարզապես խաբեություն, որ համակարգը փորձում է խորհրդարանի կառավարման մոդելի մասին տեսությամբ մատուցել հանրությանը՝ որպես երկրի փրկության ելք, իրականում փրկելով ինքզինքը:

Համակարգը խորհրդարանական կառավարման մոդելի միջոցով փորձում է ինքզինքը փրկել հենց հակասությունների և հակակշիռների այն փուլից, որում հայտնվել է ներկայիս ժամանակահատվածում: Խորհրդարանական կառավարման մոդելն իրականում կատարելու է ոչ թե հակակշիռների մեխանիզմի ձեւավորման, այլ համակարգային համերաշխության գործառույթ:

Համարվում է, որ Հայաստանում միանձնյա նախագահական կառավարում է, և նախագահը որոշում է ամեն ինչ: Իրականում, Հայաստանում երբեք չի եղել նախագահական միանձնյա կառավարում, եթե անգամ մինչև 2005 թվականի սահմանադրության բարեփոխումը նախագահը Սահմանադրությամբ օժտված է եղել անսահմանափակ լիազորությամբ: Հայաստանում պետական կառավարումն ըստ էության իրականացվել է Սահմանադրությունից դուրս:

Թե Լեւոն Տեր-Պետրոսյանը, թե Ռոբերտ Քոչարյանը, թե այժմ Սերժ Սարգսյանը չեն իրականացրել միանձնյա նախագահական կառավարում: Նրանք միանձնյա չեն որոշել ամեն ինչ: Մինչ Ռոբերտ Քոչարյանի դե ֆակտո նախագահությունը, Հայաստանում հաստատված էր

կառավարման ավտորիտար-կլանային համակարգ, որտեղ նախագահը ստիպված էր հաշվի առնել հեղինակություններին ու նրանց կլաններին: Հենց այդ ժամանակահատվածում Հայաստանի իշխանության մեջ ձեւավորվեց բավական հզոր «արարատյան» կլանը՝ Վազգեն Սարգսյանի գլխավորությամբ: Ձեւավորվեցին այլ կլաններ: 1995-1996 թվականների ընտրական ցիկլը վկայեց, որ երկրում իշխանությունը կլաններին է, ոչ թե միայն Տեր-Պետրոսյանին: Այլ հարց է, որ հանուն իշխանության մեջ իր դիրքերի, Տեր-Պետրոսյանը չէր ընդդիմանում կլանների ձեւավորմանը և պատասխանատու էր համակարգի այդ ընթացքի համար, ինչն էլ ի վերջո նրան դարձրեց այդ ընթացքի «գոհը»: Թեև, միգուցե նաև Տեր-Պետրոսյանը պարզապես ընտրեց իր հեռանալու ամենաքիչ գլխացավով տարբերակը:

Ռոբերտ Քոչարյանը կլանային համակարգից անցում կատարեց օլիգարխիկ համակարգի, որտեղ արդեն կանոնները շատ ավելի մեծ նշանակություն ունեն, քան անձերը՝ «ավտարիտետները»: Այսինքն, գուցե ոչ դասական իմաստով, բայց ըստ էության ավտորիտար-կլանային համակարգին փոխարինելու եկավ շահերի համակարգը, որտեղ արդեն նշանակություն ունեն ոչ թե անհատի կալիբրը, այլ այն, թե որքանով է նա համապատասխանում իշխող համակարգի շահին: Պատահական չէ, որ այդ համակարգում իրենց գտան նորանոր շատ անհատներ, որոնք Տեր-Պետրոսյանի իշխանության կլանային համակարգում համարվում էին «վեցնոցներ» կամ «մանկլավիկներ», և որոնց մասին ներկայում այդ հիշողություններն ունեն Տեր-Պետրոսյանի համակարգում առաջատար դիրքերում գտնված շատ գործիչներ:

Կլանային-ավտորիտար համակարգը այդ «մանկլավիկներին» չէր տալիս դրսևորվելու հնարավորություն՝ նրանք սպասարկում էին ավտարիտետներին, իսկ շահերի համակարգում նրանք արդեն ինքնադրսևորվեցին ամբողջությամբ, հայտնվելով առաջատար դիրքերում:

Օլիգարխների համակարգի ճգնաժամը սրվեց նախագահի փոփոխությունից, հատկապես այն հանգամանքից, որ գործող նախագահ Քոչարյանը փորձում էր համակարգում ամրագրել մեխանիզմներ, որոնք նրան հնարավորություն կտային նախագահի պաշտոնը թողնելով՝ չթողնել իշխանության կառավարման դեկը: Այսինքն, Ռոբերտ Քոչարյանն իր իսկ ձեւավորած ընդհանուր շահերի համակարգը ցնցեց իր անձնական իշխանական շահը առաջ բերելով և փորձելով համակարգը ենթարկել այդ անձնական շահին: 'Դա էլ անխուսափելիորեն առաջ բերեց դիմադրող ուժ՝ ի դեմս նախագահի պաշտոնի գնացող Սերժ Սարգսյանի:

Օլիգարխիկ համակարգը դրա հետեւանքով հայտնվեց ճգնաժամի մեջ: Այդ ճգնաժամն ավելի խորացավ ժամանակի գործոնների հետեւանքով՝ հասարակական-քաղաքացիական ակտիվություն, ինֆորմացիոն տեխնոլոգիաների արագ զարգացում, համաշխարհային

տնտեսական ճգնաժամ, աշխարհաքաղաքական նոր եւ առավել դինամիկ զարգացումներ, որոնցում Հարավային Կովկասն ու Հայաստանը առանցքային նշանակություն ունեցող կետեր են, ինչն էլ իր հերթին Հայաստանում սրեց Արեւմուտքի եւ Ռուսաստանի միջեւ ազդեցության պայքարը:

Այդ գործոնները Հայաստանում առաջ բերեցին շահերի նոր դասավորություն. Մերժ Սարգսյանի իշխանական շահը, որի ելակետը դե յուրե պատասխանատվությունն է միջազգային քաղաքական սուբյեկտ Հայաստանի վարքի համար աշխարհաքաղաքական դինամիկ գործընթացներում, այդ համատեքստում Մերժ Սարգսյանի եւ օլիգարխիկ համակարգի հակասությունը՝ տնտեսական թե՛ համաշխարհային, թե՛ հայաստանյան ճգնաժամի եւ Հայաստանում սպառվող տնտեսական ռեսուրսների պարագայում, եւ հասարակության-քաղաքացիների շահը, որի գիտակցումը ավելի է մեծանում տնտեսա-քաղաքական խորացող ճգնաժամի պայմաններում:

Այդ պարագայում, Մերժ Սարգսյանի իշխանական շահը պահանջում է ռեֆորմներ՝ թե՛ Հայաստանի միջազգային դերի ադեկվատ իրականացման համար, թե՛ հանրային ավելի ու ավելի սրվող շահի ադեկվատ սպասարկման եւ լարվածության էսկալացիա թույլ չտալու համար: Այդ ռեֆորմներն անհնար է արդյունավետ իրականացնել առանց օլիգարխիկ տնտեսական եւ քաղաքական համակարգի ապամոնտաժման: Օլիգարխիան բնականաբար դիմադրում է այդ զարգացմանը: Մերժ Սարգսյանն իհարկե հաճույքով վերջնականապես կպայմանավորվեր օլիգարխիայի հետ, սակայն դրան խանգարում են թե՛ հասարակության մեջ տեղի ունեցող գործընթացները, թե՛ տնտեսական ռեսուրսների սպառումը, թե՛ արտաքին միջավայրի ճնշումները:

Այդ պայմաններում, ներքիշխանական հակասությունները ռազմավարական իմաստով դառնում են անհաղթահարելի, եւ ձեւավորվում են հակակշիռների երեք կենտրոններ՝ Մերժ Սարգսյան, օլիգարխիա եւ քաղաքացիական հասարակություն: Այստեղ, կարճաժամկետ իմաստով շահերի ներդաշնակություն կարող է լինել եռանկյունու բոլոր կողմերի միջեւ, բայց հենց այդ հանգամանքն էլ իրավիճակը դարձնում է խիստ անկանխատեսելի, հատկապես արտաքին ուշադրության եւ ազդեցության ուժգնացման, արտաքին միջավայրի ճնշման պայմաններում: Այսինքն, հակակշիռների մեխանիզմն առավել կենսունակ կարող է լինել հենց ներկայիս դասավորության պայմաններում:

Հայաստանում, այս փուլում խորհրդարանական կառավարումը, փաստացի, չեզոքացնում է եռանկյունին, հանում մեջտեղից Մերժ Սարգսյանին՝ տվյալ դեպքում ոչ որպես անձ, այլ որպես շահի կրող բեւեռ, ինստիտուտ: Այսինքն, զգալիորեն չեզոքացնում, հարթում ներքիշխանական կոնֆլիկտը՝ այն փոխարինում հակակաշիռների դե յուրե մեխանիզմով, իսկ դե ֆակտո ընդլայնում ներհամակարգային

պայմանավորվածությունների դաշտը եւ ավելացնում ինքնապահպանության սպառվող պոտենցիալը: ՀԱԿՈՒԲ ԲԱԴԱԼՅԱՆ

Հայ երիտասարդների հեղինակած անօդաչու թռչող սարքերն առաջին փորձնական թռիչքն են կատարել

17 Նոյեմբերի 2012



Այսօր՝ Արգնիի ուսումնական օդանավակայանում, փորձնական թռիչքի են դուրս եկել ԱրմՌոբոտիքս մրցույթի մասնակից անօդաչու թռչող սարքերը:

Ի դեպ, թռչող սարքերի թռիչքն իրականացվել է և ավտոմատ, և հեռակառավարմամբ, իսկ նպատակը հետևյալն էր՝ մրցույթի մասնակիցներին հնարավորություն տալ իրական պայմաններում փորձարկել իրենց հեղինակած սարքերը, փորձել դրանց պատրաստվածության մակարդակը և բացահայտել թերությունները, որոնք պետք է վերացվեն մինչ 2013-ի մայիս ամիսը, երբ և կայանալու է մրցույթի եզրափակիչ փուլը: Մասնակից թիմերի առջև խնդիր էր դրված՝ նախագծել և պատրաստել այնպիսի թռչող սարքեր, որոնք թռիչքի ընթացքում կկարողանան ուսումնասիրել տարածքը, կհասկանան տեղորոշման համար նախատեսված նշանները, առցանց պատկերներ կուղարկեն, ինչպես նաև կկարողանան գտնել հատուկ նշանատեղը, համապատասխան վայր տեղափոխել 300գ բեռ և վերադառնալ մեկնարկային կետ: Անօդաչու թռչող սարքը կարող է լինել ուղղաթիռ, քուսպորոքփոթեր, օդանավ, դիրիժաբլ:

30 տարի ավիամոդելավորմամբ զբաղվող «Ֆլայ արտ» ընկերության ներկայացուցիչ Գալուստ Սահակյանի թիմի ներկայացրած թռչող սարքն առաջինն է «Էլույթ» ունենում, արդյունքները վատ չեն. «Մրցույթին ներկայացրած անօդաչու թռչող սարքը կոչվում է օբթոքփոթեր, որովհետև ունի 8 ճառագայթ-«ոտիկներ», բայց նույն ուղղաթիռի թռիչքի սկզբունքն է: Մեր սարքը մշակվել է Բսրայելի համար, նախագծի հեղինակը բրիտանացիներ են, մենք պարզապես հավաքել ենք այն: Դիպպազոնը շատ մեծ է: Ձեռքով կառավարման համար ունի GPS ալեհավաք: Ես կարող եմ հրահանգ ուղարկել

համակարգչի միջոցով և ձեռքերս ծալած նայել, թե ինչպես է այն կատարում ամբողջ ծրագիրը: Թռիչքի բարձրությունը մոտ 2 կմ է, հեռավորությունը 5 կմ-ից ոչ պակաս, արագությունը 0-ից մինչև 50 կմ/ժ: Ավելին պետք է չէ. որտեղ մենք հիմնականում օգտագործում ենք սարքը, այն է՝ տեսահոլովակների նկարահանումների ժամանակ, մեծ արագության անհրաժեշտություն չի գագացվում: Աշխատում է մարտկոցով»:

«Սկայ սպա» թիմի ներկայացրած թռչող սարքն իր չափերով ամենամեծն է, վերջնական արդյունքին հասնելը մոտ 10 տարբեր սարքեր են նախագծել:

«Մեր թռչող սարքի թևերի բացվածությունը և երկարությունը 2,5 մետր է: Թռիչքի բարձրությունը 3000 մ, իսկ հեռավորությունը մինչև 70 կմ: Աշխատում է բենզինով, ունի վիդեոնկարահանման հնարավորություն: Կապի ընդհատման կամ չլինելու դեպքում՝ իր գնացած ճանապարհը հիշելով հանգիստ հետ է գալիս տուն: Այս սարքի նախագծման և պատրաստման համար պահանջվեց 3 ամիս: Մեր թիմը բաղկացած 11 հոգուց: Ոլորտը զարգացնելու ներուժ կա, միայն համապատասխան ֆինանսավորում չկա», - ասաց թիմի ավագ մասնագիտությամբ ռադիոինժեներ Գոռ Մինասյանը:

ԱրմՌոբոտիքս մրցույթին մասնակցում է նաև ՀՀ ՊՆ ռազմական ավիացիոն ինստիտուտը: Ռազմաուսումնական հաստատության ղեկավար, գնդապետ Դանիել Բալայանը շեշտում է՝ մրցույթին մասնակցելու իմաստը բնավ հաղթելը չէ, այլ՝ խորհրդավակյան աջակցություն ցուցաբերելը: Մենք պատրաստ ենք դրան, որքան շատ ընկերություններ լինեն այս ոլորտում զբաղված, այնքան մեծ կլինի մրցակցությունը, որը կտա իր հզոր պտուղները: Մենք ոչ մեկից ոչինչ չենք պատրաստվում թաքցնել: Վստահ եմ՝ կգա ժամանակ, որ Հայաստանն անօդաչու թռչող սարքերի արտադրության ոլորտում լուրջ զարգացում կարձանագրի: Էլեկտրատեխնիկայի բնագավառում Հայաստանը միշտ բարձր դիրք է գրավել և պետք է շարունակել այդ միտումներն ու ավանդույթները: Այն ճանապարհը, որ մենք անցել ենք, նրանք արդեն կարիք չունեն անցնելու, այլ ընդամենը ծառայեցնելու որպես հարթակ հետագա «թռիչքների» համար», - նշեց ռազմական ավիացիոն ինստիտուտի պետը:

ԱրմՌոբոտիքսի հովանավոր՝ ՎիվաՄել-ՄՏՍ ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանն իր հերթին նկատեց, որ մեր երկրի համար հիշյալ ծրագիրն անչափ կարևոր է և պետք է ամեն ինչ անել զարգացնելու անօդաչու սարքերի արտադրության ոլորտը:

«Այսօրինակ ծրագրերը կարող են ծառայել քաղաքացիական և ռազմական նպատակներին: Մենք պետք է ապացուցենք մեր հարևաններին, որ ընդունակ

ենք, որ մենք կարող ենք, մեր երիտասարդները կարող են: Սա հեռանկարային ծրագիր է և համապատասխան մարմիններն ու ընկերությունները պետք է օժանդակեն նման ծրագրերին, որ մենք ավելի կարողանանք ստեղծագործել՝ մեր երիտասարդների միջոցով և այս ոլորտը առաջ տանենք», - նշեց Ռալֆ Յիրիկյանը: Հավելենք, որ մրցույթի կազմակերպիչը Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունն էր:

Հայաստանում կանանց 39%-ը ենթարկվում է ֆիզիկական, իսկ 5%-ը սեռական բռնության. Սուսաննա Վարդանյան

26



Նոյեմբերի 2012 - 14:59

Կանանց իրավունքների կենտրոնի կոորդինատոր Արփինե Գևոգյանն այսօր լրագրողների հետ հանդիպմանը նշեց, որ նոյեմբերի 25-ը կանանց նկատմամբ բռնությունների վերացման միջազգային օրն է: Այդ օրվանից սկսած հաշվում են 16-օրյակ՝ գենդերային խտրականության դեմ պայքարի շրջան:

Կանանց իրավունքների կենտրոնի տնօրեն Սուսաննա Վարդանյան հայտնեց, որ ընտանեկան բռնության մասին օրենքի մշակումն իրենք սկսել են դեռևս 2007թ.-ից, և այն պատրաստ էր 2009թ.-ին. «Օրենքի մասին քննարկումներ եղել են նաև Եվրոպայում: Այն մի քանի անգամ շրջանառության մեջ է դրվել, և շատ դետալներ փոխվել են: Մինչև դեկտեմբերի 10-ը օրենքի նախագիծը կլինի վարչապետի մոտ, սակայն, դժվար թե մինչ նախագահական ընտրություններն այն ընդունվի»: Բանախոսը նշեց, որ օրենքը լիովին նորություն է. «Սկզբնական շրջանում քննարկվում էր, թե որքանով է անհրաժեշտ ընտանեկան բռնության մասին օրենքը, քանի որ ասվում էր, թե տարբեր օրենքներում կա անդրադարձ բռնության մասին: Սակայն մենք հավաստիացրեցինք, որ տարբերություն կա ընտանեկան և այլ ոլորտում տեղի ունեցող բռնության վեներայի»:

Անդրադառնալով բուն օրենքին՝ նա հայտնեց, որ, ըստ օրենքի, եթե բռնարարն ամուսինն է, ոստիկանն իրավունք ունի հեռացնի նրան ընտանիքից՝ 72 ժամով, իսկ դատարանը հետագայում կորոշի, թե վերջնական

լուծումը ինչպես տա: «Կարծում եմ՝ սկզբում դժվար կլինի օրենքի կիրառումը, սակայն դա սահմաններ կդնի շատ մարդկանց դեմ: ԱՊՀ շատ երկրներում այս մասին օրենք վաղուց ընդունվել է», - ասաց Սուսաննա Վարդանյանը: Ըստ բանախոսի՝ 2007թ. տվյալներով՝ Հայաստանում կանանց 39%-ը ենթարկվում է ֆիզիկական, իսկ 5%-ը սեռական բռնության: Սակայն շատ դեպքերում կանայք ուղղակի լռում են:

է, քան 2011թ. նույն ժամանակահատվածում 1000 խոշոր հարկատուների վճարածը:

Արեւմտյան Հայաստան

Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարությունը մեկ տարեկան է 25 Նոյեմբերի 2012 - 16:26

Ովքե՞ր են Հայաստանի խոշոր հարկատուները

06 Նոյեմբերի 2012 - 11:20

Պետեկամուտների կոմիտեն հրապարակել է 2012թ. առաջին ինը ամիսների Հայաստանի խոշոր 1000 հարկատուների ցանկը: Խոշոր հարկատուների ցանկը գլխավորում է «ՀայՌուսգազարդ» ընկերությունը, որն այս տարվա 9 ամիսների ընթացքում վճարել է 22.6 մլրդ դրամի հարկ, նախորդ տարվա 15.9 միլիարդ դրամի փոխարեն: «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը» 2-րդ հորիզոնականում է՝ վճարելով 16.4 մլրդ դրամի հարկ, անցյալ տարվա 22.5 մլրդի փոխարեն: 3-րդ տեղում է գործարար, ԱԺ պատգամավոր Սամվել Ալեքսանյանին պատկանող «Ալեքս Գրիգ» ընկերությունը՝ 13.5 մլրդ դրամի վճարած հարկերով: Այս ընկերությունը շուրջ 2 միլիարդ դրամի ավելի շատ է հարկ է վճարել, քան անցյալ տարի: Նրան հաջորդում է «Ղ Տելեկոմ» (ապրանքանիշը՝ «Վիվա Մել-USU») ընկերությունը՝ 13.3 մլրդ դրամ ցուցանիշով, որն նախորդ տարվա համեմատ մոտ 1 միլիարդ դրամ ավել գումար է մուտքագել պետբյուջե: 5-րդ հորիզոնականում է կապի մյուս օպերատոր «ԱրմենՏել» ընկերությունը՝ 9.6 մլրդ դրամ վճարած հարկերով, որը շուրջ 100 հազար դրամով հետ է մնացել իր իսկ նախորդ ցուցանիշից: Հաջորդ հորիզոնականներում բենզին ներկրող ընկերություններն են: Խոշոր հարկատուների աղյուսակում «նորաբնակ» է 12-րդ տեղը զբաղեցրած «Սամ սեր գրուպ» ընկերությունը՝ վճարելով է 4.6 մլրդ դրամի հարկ: Ընկերության մասին առաջին անգամ խոսվեց այն ժամանակ, երբ մեծ աղմուկ բարձրացավ բանակին մատակարարվեց գումեշի միսից: Նշենք, որ հանքարդյունաբերական ոլորտի ընկերություններն այս տարի աճ են արձանագրել: «Գեո պրո մայնինգը» զբաղեցնում է 14-րդ տեղը՝ քառապատկելով իր վճարումները, իսկ «Դինո գոլդ մայնինգն»՝ 9-րդը, կրկնապատկելով պետբյուջեի վճարումները: Նույն ցուցանիշն ունի նաև Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը: Ընդհանուր առմամբ՝ 1000 խոշոր հարկատուները միասին վերցրած նշված ժամանակահատվածում վճարել են 394.9 մլրդ դրամի հարկ, ինչը 42.1 մլրդ դրամով ավելի

Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհուրդը 2011 թվականի փետրվարի 4-ին հռչակեց Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարությունը կազմավորելու գործընթացի սկիզբը:

Այն



հարցին, թե ինչո՞ւ այդքան պատասխանատու որոշում կայացվեց, մենք պատասխանել ենք 2011 թվականի նոյեմբերի 16-ին հրապարակված <<Ինչո՞ւ Արեւմտյան Հայաստանի Կառավարություն>> հոդվածում: Այստեղ կրկնենք որոշ հիմնադրույթներ այդ համապարփակ հարցադրման եւ իրողության հետ կապված:

- Արեւմտյան Հայաստանի Կառավարության ստեղծման պատասխանատուներից մեկը Միջազգային ընկերակցությունն է, ով ոչ միայն 90 տարի ի վեր ամեն կերպ մերժել ու շրջանցել է հայոց իրավունքները իր բնօրրան հայրենիքի նկատմամբ, այլև ամեն ինչ արել է, որ նորանկախ Հայաստանը նույնպես զրկված լինի այդ իրավունքները պաշտպանելու լծակներից եւ հնարավորությունից:

- Սա իր հերթին նշանակում է, որ դաշնակից տերությունները, ներկայիս Միջազգային ընկերակցությունը, պատասխանատվություն են կրել եւ կրում են այն հարցերում, որ Միջին Արեւելքի պետությունների ետպատերազմյան սահմանները կարգավորելիս, այսինքն՝ Մերի դաշնագրի դրույթները կյանքի կոչելիս, խոշոր բացթողումներ են արել, ինչի հետեւանքով Միջին Արեւելքում չի կարգավորվել հայկական, քրդական հարցերը եւ դրանք մնացել են որպես լարվածության օջախներ:

- Հաջորդ կարեւոր հարցը, ինչը հաճախ պետք է հիշել, այն է՝ թե Հայկական Հարցի հետ կապված խնդիրները

բավարար չէ դիտարկել միայն իրավական հարթության մեջ, այն պարզ պատճառով, որ դրանց վրա անմիջական ազդեցություն ունեն նաև տարածաշրջանային ժամանակակից ռազմաքաղաքական կարեւոր գործոնները, զարգացումներն ու իրադարձությունները: Օրինակ, այդպիսի մի խնդիր է Արեւմտյան Հայաստանի (ներառյալ Կիլիկյան Հայաստանի) բռնազավթված տարածքների խնդիրը, որովհետև այդ տարածքներից է բխեցվում տարածաշրջանում ապրող հայությանն ու Հայաստանի Հանրապետությանը, Հայաստանին ուղղված արդի բոլոր հիմնական սպառնալիքները, եւ ոչ միայն հայությանն ու Հայաստանին: Որովհետև, առաջին հերթին, Արեւմտյան Հայաստանի ու Կիլիկյան Հայաստանի բռնազավթված տարածքների վրա են տեղակայված ժամանակակից Թուրքիայի այն զինված ուժերը, որոնք այդ տարածքներից սպառնում են Հայաստանի Հանրապետությանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը (Արցախին), Վրաստանում ու Ջավախքում ապրող հայությանը, Իրանին՝ ներառյալ Իրանում ապրող հայությանը, Իրաքին՝ ներառյալ Իրաքում ապրող հայությանը, Սիրիային՝ ներառյալ Սիրիայում ապրող հայությանը:

- Որովհետև, վաղուց արդեն ժամանակն է, որ հայությունը նեցուկ կանգնի ՀՀ-ին ու ԼՂՀ-ին եւ գործնական քայլեր ձեռնարկի, առաջին հերթին, հենց ապօրինի ու անօրինական շրջափակումները վերացնելու ուղղությամբ: Իսկ դրա ամենաիրական ու ամենաիրատեսական ճանապարհը, որպես տեր եւ իրավատեր իր սեփական հայրենիքին տեր կանգնելու գործընթացն է:

- Որովհետև, Միջազգային ընկերակցության իրավական, քաղաքական, նաև բարոյական դիրքորոշումից ու վերաբերմունքից է կախված այն հարցի պատասխանը, թե ինչպե՞ս կընթանան հայության եւ Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող այս հարցի հետ կապված դեպքերի ու իրադարձությունների զարգացումները:

- Գալով Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի եւ Արեւմտյան Հայաստանի Կառավարության ձեռնաչափին, ընտրված է իրավական ուղիներով ընթանալու եւ երկու խնդիր լուծելու ճանապարհը: Առաջինը, իրավական բոլոր միջոցներով հայության բոլոր իրավունքների եւ, առաջին հերթին, Հայաստանի տարածքային ամբողջականության պահանջների պաշտպանության խնդիրը: Երկրորդը, հայությանն ու Հայաստանին ուղղված սպառնալիքները չեզոքացնելու խնդիրը:

Առաջինը հնարավոր է, երբ հայությունը՝ այս դեպքում Արեւմտյան Հայաստանի հայը հանդես գա որպես իրավունքի սուբյեկտ, որպես բնիկ ժողովուրդ, ով իրավունք ունի իր բնօրրանում, հայրենիքում՝ ինքնորոշման իրավունքի, ընդհուպ մինչև անկախություն: Ով իրավունք ունի իր հայրենիքի

նկատմամբ իր մասով, որպես իրավահաջորդ Վիլսոնյան Իրավարար վճռի, ով իրավունք ունի իր հայրենիքի նկատմամբ, որպես Կիլիկյան Հայաստանի անկախության պահանջատեր իրավահաջորդ: Երկրորդը, հնարավոր է, եթե հայությունը՝ սփյուռքահայությունը եւ տարածաշրջանում բնակվող հայությունը, օգտվելով բնական եւ մարդկային իրավունքի սկզբունքներից ու նորմերից, օգտվելով Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի Մշտական, զինված, դրական չեզոքության մասին հայտարարությունից՝ ձեռնարկի իր ինքնապաշտպանության ուժերի կազմավորումը:

Ամփոփելով արդեն իսկ ասվածը նշենք, որ Արեւմտյան Հայաստանի հայության եւ Արեւմտյան Հայաստանի իրավունքները պաշտպանելու այլ ճանապարհ չկա, քան Արեւմտյան Հայաստանի Կառավարության ձեռնաչափը, որովհետև մնացած հասարակական – քաղաքական ձեռնաչափերը բազմիցս ապարդյուն փորձարկվել են անցնող 90 եւ ավելի տարիների ընթացքում:

Այժմ խոսենք անցած մեկ տարում Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի եւ Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության իրականացրած ծրագրային աշխատանքների մասին: Անցած մեկ տարին բավարար ժամանակ էր եւ գործունեության գլխավոր ուղղությունները հստակեցնելու, եւ այդ բոլոր ուղղություններով համապատասխան քայլեր ձեռնարկելու համար: Նշենք դրանք.

2011 թվականի փետրվարի 4-ին Արեւմտյան Հայաստանի Հայերի Ազգային Խորհուրդը հռչակեց Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության կազմության սկիզբը:

2011 թվականի մարտի 6-ին Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի հատուկ հրամանագրով ստեղծվեց Արեւմտյան Հայաստանի Ժառանգության ազգային հանձնախումբը:

2011 թվականի մարտի 30-ին Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհուրդը որոշում կայացրեց Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի Մշտական, զինված, դրական չեզոքությունը հայտարարելու մասին:

2011 թվականի ապրիլի 14-ին Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհուրդը եւ Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարությունը դիմեց ՄԵԻՐի դաշնագիրը ստորագրած պետություններին՝ իր մասով իրավահաջորդության դիմումով:

2011 թվականի մայիսի 28-ին Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհուրդը որոշում կայացրեց Հայերի ցեղասպանության, Մեծ Եղեռնի հանցագործության իրականությունը հիմնավորելու Իրավաբանական հատուկ հանձնաժողովի ստեղծման վերաբերյալ: 2011 թվականի սեպտեմբերի 4-ին Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհուրդը եւ Արեւմտյան

Հայաստանի Վտարանդի Կառավարությունը դիմեց ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդին՝ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճիռը վերստին կյանքի կոչելու դիմումով: 2011 թվականի սեպտեմբերի 13-ին Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհուրդը եւ Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարությունը դիմեց Եվրոպառլամենտի պատգամավորներին 1987 թվականի հունիսի 18-ին ընդունված «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձեւի որոշ դրույթներ վերանայելու եւ վերաձեւակերպելու դիմումով:

2011 թվականի հոկտեմբերի 6-ին Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհուրդը եւ Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարությունը ձեռնարկեց համաժողովրդական էլեկտրոնային հարցապնդում՝ հետեւյալ երկու ծրագրային խնդիրներով՝ 1. Վիլսոնեան Իրավարար վճիռի իրականացման ծրագիր, 2. Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության Խորհրդարանական ընտրությունների ծրագիր: 2011 թվականի հոկտեմբերի 21-ին Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի նախագահի հատուկ հրամանագրով կյանքի կոչվեց Արեւմտյան Հայաստանի Դրոշը:

2011 թվականի դեկտեմբերի 26-ին Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի նախագահի հատուկ հրամանագրով հայտարարվեց Արեւմտյան Հայաստանի հայերի ինքնապաշտպանության եւ անվտանգության ապահովման ազգային համակարգի ստեղծման գործընթացի սկիզբը:

Վստահությամբ կարող ենք արձանագրել, որ 2011 թվականը հարուստ էր Արեւմտյան Հայաստանի հայերի եւ Արեւմտյան Հայաստանի իրավունքների պաշտպանության իրավական – քաղաքական ծրագրային փաթեթները պատրաստելու, ձեւակերպելու եւ հունավորելու տեսանկյունից: Այս իմաստով կատարված աշխատանքները, ավելի քան, արդյունավետ ու նպատակասլաց են եղել:

2012 թվականը նույն թափով ու վճռականությամբ աշխատանքները շարունակելու, ինչպես նաեւ կազմակերպչական գործունեություն ծավալելու ժամանակաշրջան է լինելու: Մենք գիտենք, թե թվարկված աշխատանքներում, որքան մեծ է Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի եւ Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության բոլոր անդամների, նվիրյալների ու մասնակիցների անձնական ներդրումը: Մեր հատուկ շնորհակալությունը բոլորին: Մենք միասին ենք եւ հաղթանակը մերն է լինելու:

Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության Վարչապետ՝

Տիգրան Փաշարեզյան
04.02.2012 թ.

Եթե չլինեք 1915 թվականը, Թուրքիայում այսօր 18 մլն ոչ մուսուլման կապրեր. թուրք վերլուծաբան

16 Նոյեմբերի 2012 - 17:24



Թուրք հայտնի վերլուծաբան Օրհան Քեմալ Ջենգիզը Today's Zaman-ի իր սյունակում «Ստամբուլն ու Կոստանդնուպոլիսը» վերտառությամբ հոդվածում անդրադարձել է կատարել Թուրքիայում ազգային փոքրամասնությունների խնդրին:

«Երբ ես փոքր էի, մենք ապրում էինք «հունական տանը», իր երկաթյա դարպասներով և կառուցվածքով այն գերիշխում էր մեր փողոցում և տարբերվում էր մյուս տներից: Հիշում եմ, թե ինչպես էին զբոսաշրջիկ հույն կանայք լացում՝ տեսնելով այս ամենը: Մայրս էլ էր հաճախ հուզվում: Երկար տարիներ չէի կարողանում գտնել այս ամենի իմաստը: Թեև ոչ մուսուլմանները «հավվել» էին՝ թողնելով տներն ու փողոցները, եկեղեցիներն ու աղբյուրները, սակայն նրանք շարունակում էին մեր քաղաքի մի մասը լինել, ապրել որպես սովերեններ: Թեև մեր պատմության դասագրքերում զգուշորեն բաց է թողնված նրանց վերաբերյալ նշումները, նրանց անունները ջնջված են, սակայն նրանք թողել են ինձ պես «հիշողների»:

Երկար տարիներ անց ես սկսեցի հասկանալ այս երկրի կարգն ու խնդիրները, հասկացա, որ հարցը «սոցիալական երկրաշարժն է», որն ավելի մեծ էր, քան ես փոքր ժամանակ կարող էի պատկերացնել: Եթե վերցնենք մինչ 1915 թվականի վիճակագրությունը և բերենք մերօրյա Թուրքիա, ապա այս երկրում պետք է ապրեր 18 մլն ոչ մուսուլման: 18 մլն ոչ մուսուլման՝ հայեր, հույներ, հրեաներ: Ի՞նչ տեսակի Թուրքիա կլինեք դա:

Մենք ավելի ինքնավստահ կլինեինք: Կունենայինք ոչ մուսուլման պատգամավորներ խորհրդարանում, ինչպես Օսմանյան կայսրության ազգային ժողովն էր: Մենք այլևս չէինք ունենա քրդական խնդիր: Մենք չէին լինի հասարակություն, որը կորցրել է իր հիշողությունը:

Մենք չէինք կախի «Ստամբուլը մինչ 1453 թվականը» գրությամբ պաստառ Թուրքիայի և Հունաստանի ֆուտբոլի հավաքականների միջև հանդիպման ժամանակ: Իմ ընկերներից Բեքիր Բերաթ Օզփիթը, ով ներկայացնում էր այդ դեպքն ինձ, ասաց, որ մենք այդ պաստառով հույն երկրպագուներին մի ուղերձ հղեցինք, որ մենք չենք զգում, թե Ստամբուլը մեզ է պատկանում, այն մերն է, սակայն նվաճված է, գրավված...

Եթե մենք չհալածեինք ոչ մուսուլմաներին, ապա կունենայինք խիզախություն նայելու մեր պատմության մութ էջերին, չէինք ամաչի «Կոստանդնուպոլիս» գրել Ստամբուլի հետ: Մենք խիզախություն կունենայինք վերաբացել Սուրբ Սոֆիայի տաճարը, որը կլիներ եկեղեցի/մզկիթ մուսուլմանների և քրիստոնյաների համար համատեղ: Մենք կընդունեինք Ստամբուլի հայկական ճարտարապետությունն իր ամբողջ շուքով: Մենք Օսմանյան կայսրության մեծ ճարտարապետ Մինանին կկոչեինք իր իսկական հայկական անունով՝ Արմեն Մինանյան: Եվ մենք կխոնարհվեինք այս մեծ վարպետի առաջ՝ ընդունելով նրա իսկական ինքնությունը:

